ԺԵ. ՎԱՐԱԳ

Մեզ մնում էր տեսնել Վարագայ վանքը, այնուհետեւ մեր հետազօտութիւնները Վանայ շրջակայքում պէտք էր վերջացած համարել:

Գեղեցիկ պայծառ առաւօտ էր, երբ ես եւ Ասլանը ձի նստած դուրս եկանք Այգեստանի ծառազարդ փողոցներից եւ ուղեւորուեցանք դէպի վանքը: Մեր առջեւն էր Վարագայ սարը իր սքանչելի տեսարաններով: Արեւը դեռ նոր էր սկսել ծագել: Նա կամաց-կամաց վեր էր համբառնում Վարագայ լեռնագագաթի ճիշտ այն ամենաբարձր կէտից, որ կոչւում է Գալիլիա: Ես առաջին անգամն էի տեսնում արեւի մի այնպիսի հրաշալի ծագումը: Ինձ այնպէս էր թւում, որ տվնջեան լուսատուն գիշերը հանգչել էր Գալիլիայի գագաթի վրայ, միեւնոյն նոիրական այրերի մէջ, որտեղ մի ժամանակ պատսպարուած էր Հռիփսիմէն իր ընկերուհիների հետ, իսկ այժմ լուսաճաճանչ պայծառութեամբ դուրս էր գալիս իր հանգստարանից՝ լուսաւորելու հայոց աշխարհը: Նոյն այրերի մէջ ճգնում էր երանելի կոյսը, նոյն այրերից դուրս եկաւ եւ նա եւ, որպէս մի պայծառ լոյս, ուղեւորուեցաւ դէպի Արարատ, կատարելու այն մեծ բարոյական պատերազմը հայոց հեթանոս թագաւորի եւ հեթանոսական խաւարի հետ, որի արդիւնքը եղաւ քրիստոնէութեան մուտքը Հայաստանում: Նոյն այրերի մէջ թաքցրեց նա կենսատու փայտի ս. Նշանը, որ ամփոփած էր մի փոքրիկ խաչի մէջ եւ որը նրա կուրծքի ու պարանոցի աստուածային զարդն էր կազմում: Ամբողջ չորս դար հրաշալի սուրբ նշանը մնաց այնտեղ անյայտութեան մէջ, մինչեւ Թոդիկ ճգնաւորի մշտական աղօթքով յայտնուեցաւ նա եւ, արեգակի լուսափայլ պայծառութեամբ, Վարագայ լեռնագագաթի բարձրութիւնից թռչելով, իջաւ նրա լանջաց վրայ, եւ որպէս մի ժամանակ զարդարում էր Հռիփսիմէի կուրծքը, այնուհետեւ դարձաւ Վարագայ լեռան կրծքի երկնային զարդը: Միեւնոյն տեղում հիմնուեցան տաճարներ, որ սուրբ նշանի անունով կոչուեցան Ս.Խաչ: Այդ տաճարներն էին, որ բոլորը միասին ներկայացնում էին Վարագայ վանքը, ուր այն առաւօտ ես եւ Ասլանը գնում էինք:

Արեւը բարձրացաւ: Նրա ճառագայթները հրեղէն շառաւիղների նման տարածուեցան Վանայ շրջակայքը, տարածուեցան ծովակի մանիշակագոյն մակերեւոյթի վրայ եւ լուսաւորեցին առաւօտեան մռայլի մէջ ծածկուած հեռաւոր լեռները: Ինձ տիրում էր խորին հոգեզմայլութիւն: Արեւի ծագումը զարթեցնում էր իմ սրտում այդ նոիրական վայրերի եւ այդ սրբազան լեռների վաղեմի յիշատակները: Կարծես դարերը ետ-ետ էին գնում, եւ հին աւանդութիւնը կենդանանում էր, կերպարանք էր ստանում իմ աչքի առջեւ: Կարծես կրկին երեւում էր ինձ Թոդիկ ճգնաւորի սքանչելի տեսիլքը: Կենսատու ս.